



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

-----N-----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԱԻՆ Կոտայքի մարզային փրկարարական վարչության հարգելի՛ ծառայողներ, ծառայության վետերաններ,

Շնորհավորում եմ Փրկարարի օրվա կապակցությամբ:

Արտակարգ իրավիճակների հաղթահարման և քաղաքացիական պաշտպանության կարևոր գործում անգնահատելի է ձեր առաքելությունը:

Ձեր մարդասիրական աշխատանքը սուկ աշխատանք չէ, այլ նվիրում, որն արժանի է միայն երախտիքի և խորին հարգանքի:

Ձուր չէ, որ ձեր անբասիր, սրտացավ, մարդակենտրոն և արժանապատիվ ծառայության շնորհիվ վայելում եք մեր հասարակության սերն ու վստահությունը:

Իմացե՛ք, որ քաջ գիտակցում ենք այն դժվարություններն ու բարդությունները, որոնց միջով անցնում եք հանուն մարդկային կյանքերի փրկության՝ շատ հաճախ վտանգելով նաև սեփական կյանքն ու առողջությունը:

Հարգելիներ՛ս,

Առանձնահատուկ ուզում եմ կարևորել ձեր դերակատարությունը համավարակի հաղթահարման այս բարդ շրջափուլում և ամենատարբեր իրավիճակներում ցուցաբերած ձեր մարդասիրության և արիության համար հայտնում մեր երախտագիտությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով մասնագիտական տունի առթիվ՝ մաղթում եմ, որ այսուհետև ևս բարձր պատրաստվածությամբ, նվիրումով և իսկական Փրկարարին վայել խիզախությամբ իրականացնեք ձեր ծառայությունը՝ հնարավորինս զերծ վտանգներից ու արտակարգ իրավիճակներից:

Խաղաղություն և երջանկություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ